«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

### ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների՝ VAZ 2115 34ZT045 պետհամարանիշի փոխադրամիջոցները հանդիսանում են Վահրամ Շայգադի Հակոբյանի սեփականությունը:

Փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 53900/հիսուներեք հազար ինը հարյուր /ՀՀ դրամ, ինչը չի վճարվել, իսկ Վահրամ Շայգադի Հակոբյանի կողմից գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 14100/տասնչորս հազար մեկ հարյուր / ՀՀ դրամի չափով:

2023 թվականի հունիսի 29-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 17-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 29.06.2023թ. ծանուցում azdarar.am կայքում/ Վահրամ Շայգադի Հակոբյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 17.07.2023թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Վահրամ Շայգադի Հակոբյանի բացակայությամբ:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար



սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի տարեկան գումարները /այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները / անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերին /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք՝ փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը՝ իրպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ**

1. Վահրամ Շայգադի Հակոբյանից հոգուտ Գավառի համայնքի բյուջե գանձել ընդամենը 68000/վաթսուևութ հազար/ՀՀ դրամ որպես՝ VAZ 2115 34ZT045 պեռոհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գումար, ներառյալ տույժերը:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հ
- ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառի համայնքի ղեկավարը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ՂԱՇՏՈՅԱՆ

2023թ. հունիսի 17  
Բ. Գավառ







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**20 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1412-Ա**

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 111/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԵՐԸ և ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.04.2021թ. N 698-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 27.08.2021 թ-ի 1383-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման, Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող N 06032023-05-0037 վկայականը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, որի համաձայն Գավառ համայնքի Նալբանդյան փողոց թիվ 111/1 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափազորվել է /ծածկագիր 05-001-0018-0036/, հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1,81962 հա, որը Գավառ համայնքի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Հաստատել թիվ 06032023-05-0037 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած Գավառ համայնքի Նալբանդյան փողոց թիվ 111/1 հասցեում գտնվող հողամասի սահմանները կից ներկայացված հատակագծին համապատասխան հաստատված համայնքի ղեկավարի կողմից, և վերագրանցել 1,81963 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ որպես Գավառ համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական վերագրանցում կատարելու համար:

3. Որոշման կատարման հսկողությունը ղնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՏԱՐՈՂ**

**Գ. ԴԱՇՏՈՅԱՆ**

2023թ. *հունիսի 20*  
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1413-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Պ.ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ  
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՖՐԻԴԱ ՎԱԼՈՂԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ  
ԳՈՒՐԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԺԱՆԵՏԱ ԺՈՐԱՅԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական  
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական  
Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական  
ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Ինքնակամ կառույցների  
օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ.  
N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի  
N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով 07.04.2023թ. տրված  
Նորատուսի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.06.1991թ.  
թիվ 16 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված  
06.07.2023թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Անդրանիկ Գուրգենի Գրիգորյանի /ծնված  
02.01.1968թ. / ղիմումը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման  
վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ. / կողմից 02.05.2023թ-ին տրված ինքնակամ  
շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման  
2023JZM3ZP ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և  
շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի  
Պ.Սևակի փողոց թիվ 4 հասցեում գտնվող հողամասը չափազրվել է, հատկացվել է 0.15 հա, ինչը  
փաստացի կազմում է 0.15755 հա, որը Անդրանիկ Գուրգենի Գրիգորյանին /ծնված 02.01.1968թ. /  
ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական  
կառուցված 274.41 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1978-1990թթ./  
կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.15755 հա հողամասը չի գտնվում ՀՀ  
հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես  
ևս ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում  
սերվիտուտ, որոշում եմ

1. Վերականգնել Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի Պ.Սևակի փողոց թիվ 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ֆրիդա Վալդի Հակոբյանի /ծնված 19.07.1946թ-ին/, Անդրանիկ Գուրգենի Գրիգորյանի /ծնված 02.01.1968թ-ին/, Ժանետա Ժորայի Ներսիսյանի /22.08.1972թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.15755 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 274.41 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1978-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2019թ-ին ինքնակամ կառուցված 144.6 քմ մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել որպես ինքնակամ շինություն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023 թ. հունիսի 19  
ք. Գավառ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1414-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄԱՅԻՍ ՈՍԿԱՆՑԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻՑ ՀՅՈՒՄԻՍ ԸՆԿԱԾ  
ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 03.03.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023XMZUSZ ծածկագիրը, ինքնակամ կառույց իրականացրած անձ Արտյոմ Ֆելիքսի Խանձրաձյանի դիմումը՝ Գավառ համայնքի Արամայիս Ոսկանյան փողոց թիվ 8 հասցեից հյուսիս ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 40.7 քմ. արտաքին /37.6 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**



1. Գավառ համայնքի Արամայիս Ոսկանյան փողոց թիվ 8 հասցեից հյուսիս գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.00407 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 40.7 քմ. արտաքին /37.6 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ համայնքի Արամայիս Ոսկանյան փողոց թիվ 8 հասցեից հյուսիս գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.00407 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 40.7 քմ. արտաքին /37.6 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:
4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, Արամայիս Ոսկանյան փողոց, թիվ 8/53 հասցեն:
5. Օրինականացված 40.7 քմ. արտաքին /37.6 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գավառ համայնքի բնակիչ Արտյոմ Ֆելիքսի Խանձրաձյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հունիսի 20  
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1415-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵԻՑ ԱՐԵՎԵԼՔ ԸՆԿԱԾ  
ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 11.07.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազրման տվյալների մուտքագրման 2023HZ378B ծածկագիրը, ինքնակամ կառույց իրականացրած անձ Զվեղիկ Գուրգենի Սիրունյանի դիմումը՝ Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 33 հասցեից արևելք ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 19.6 քմ. արտաքին /18.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 33 հասցեից արևելք գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00196 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 19.6 քմ. արտաքին /18.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 33 հասցեից արևելք գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00196 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 19.6 քմ. արտաքին /18.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:
4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, Արամայիս Ոսկանյան փողոց, թիվ 1/81 հասցեն:
5. Օրինականացված 19.6 քմ. արտաքին /18.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցի իրականացրած անձին՝ Գավառ համայնքի բնակիչ Զվեդիկ Գուրգենի Սիրունյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ՂԱՇՏՈՅԱՆ

2023 թ. հուլիսի 20  
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 1416-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ  
ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՀԱԿՈՐ ԳՈՐԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, հիմք ընդունելով 12.07.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 15.06.2023թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Հակոբ Գուրգենի Սահակյանի /ծնված 13.05.1960թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Բուռնազյան 2-րդ փողոց 7-րդ նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափազրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08443 հա, որը Հակոբ Գուրգենի Սահակյանի /ծնված 13.05.1960թ./ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ 0.08443 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

- Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Բուռնազյան 2-րդ փողոց 7-րդ նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հակոբ Գուրգենի Սահակյանի /ծնված 13.05.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.08443 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
- Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
- Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. *հուլիսի 21*  
ք. Գավառ









ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1417-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՌԱՍ ԹԱՂԱՄԱՍԻ ԲՈՒՌԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 38 ՀԱՍՑԵԻ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ  
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱԿՈՖ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական  
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական  
Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական  
ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ.  
«Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում  
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,  
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,  
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների  
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և  
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ.-ի N 233-Ն  
պահանջներով, հիմք ընդունելով 12.07.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և  
սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի  
ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 15.06.2023թ./ գույքի նկատմամբ ժառանգ Հակոբ  
Գուրգենի Սահակյանի /ծնված 13.05.1960թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված  
հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի  
Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոց թիվ 38 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը  
չափազրվել է, հատկացվել է 0.12 հա, ինչը փաստացի կազմում է 0.11668 հա, որը Հակոբ  
Գուրգենի Սահակյանին /ծնված 13.05.1960թ./ ժառանգության իրավունքով պատկանող  
հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 308.20 քմ ընդհանուր մակերեսով  
շենք-շինությունների /կառուցված 1962-1968թթ./ կառուցման ու սպասարկման համար  
անհրաժեշտ 0.11668 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով  
սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային  
օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոց թիվ 38  
հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հակոբ Գուրգենի Սահակյանի /ծնված  
13.05.1960թ.-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման  
համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության  
իրավունքը 0.11668 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 308.20 քմ  
մակերեսով շինությունների /կառուցված 1962-1968թթ./ նկատմամբ՝ որպես օրինական  
տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Հացառատ թաղամաս, Բուռնազյան փողոց, թիվ 38 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հուլիսի 21  
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1418-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 41 ՀԱՍՑԵԻՑ ՀՅՈՒՄԻՍ ԸՆԿԱԾ  
ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ  
ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 28.06.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023JJDM4E ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արմեն Եզոբի Դուլոյանի դիմումը՝ Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 41 հասցեից հյուսիս ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 42.5 քմ. արտաքին /38.5 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, *որոշում է*

1. Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 41 հասցեից հյուսիս գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00425 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 42.5 քմ. արտաքին /38.5 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն համաձայն էից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 41 հասցեից հյուսիս գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.00425 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 42.5 քմ. արտաքին /38.5 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:
4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, Ազատության 2-րդ փողոց, 4-րդ անցուղի, թիվ 1/1 հասցեն:
5. Օրինականացված 42.5 քմ. արտաքին /38.5 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը գնման նախապատվության իրավունքով /ուղղակի լաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գավառ համայնքի բնակիչ Արմեն Եգորի Ղուլոյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հուլիսի 21  
ք. Գավառ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavar.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1419-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԼՃԱՓ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26/1 ԱՆԱՍՆԱՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ  
ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 14 հուլիսի 2023 թվականի թիվ 7 նիստի թիվ 138-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արամ Սանասարի Դավթյանի Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված անասնաշենքը օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 26062023-05-0040, տրված 26.06.2023թ./, որոշում եմ

1. Գավառ համայնք գյուղ Լճափ 2-րդ փողոց թիվ 26/1 անասնաշենք հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 410,0 քմ արտաքին /384,6 քմ ներքին/ մակերեսով անասնաշենքը և անասնաշենքի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.10712 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար անասնաշենքի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1748 /մեկ հազար յոթ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 716700 /յոթ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ; անասնաշենքի համար առանձնացված 0.10712 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 514,8 /հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը 551500 /հինգ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արամ Սանասարի Դավթյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:



3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Արամ Սանասարի Դավթյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ



2023թ. հուլիսի 21  
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1420-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ  
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԽԱՉՏՏՈՒՐ ՌԱԶՄԻԿԻ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 19.07.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ համայնքի Պետրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 24 հասցեի սեփականատեր Խաչատուր Ռազմիկի Դովլաթյանի /ծնված 07.01.1960թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Պետրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 24 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.1 հա, ինչը փաստացի կազմում է 0.08394 հա, որը Խաչատուր Ռազմիկի Դովլաթյանին /ծնված 07.01.1960թ./ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 556.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08394 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնքի Պետրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 24 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Խաչատուր Ռազմիկի Դավլաթյանի /ծնված 07.01.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.08394 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 556.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990թ./նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Պետրովի փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 24 հասցեն:
3. Մույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հուլիսի 21  
ք. Գավառ

